ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ

ք. Ծաղկաձոր

28/02/2020

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 4 անդամներ:

Բացակա էին՝ Արմեն Գալստյանը, Գառնիկ Կարապետյանը, Արման Հակոբյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Արթուր Հարությունյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Գարիկ Բաղալյանը

Լսեցին
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 28-Ի ԹԻՎ 03 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

Հաստատել համայնքի ավագանու 2020 թվականի փետրվարի 28-ի թիվ 03 հերթական նիստի օրակարգը՝

1. Ծաղկաձոր համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 29-ի թիվ 10 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
2. Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի /ակտիվների և պարտավորությունների/ ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:
3. Հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:
4. Ծաղկաձոր համայնքի սեփականություն համարվող հողամասերը աճուրդային կարգով օտարելու և մեկնարկային գին սահմանելու մասին:

Կողմ-4 Դեմ-0 Չեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 11/

Լսեցին
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 29-Ի ԹԻՎ 10 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՄԻՆ

/Զեկ. ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

1.Ծաղկաձոր համայնքի ավագանու 2020 թվականի հուվնարի 29-ի <<<<Բայազետ>> ազատամարտիկների միություն>> հասարակական կազմակերպությանը դրամական աջակցություն տրամադրելու մասին թիվ 10 որոշման հղման մեջ <<որոշումը>> բառից հետո լրացնել << և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի թիվ 5-Ն հրամանով սահմանված հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները>> բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-4 Դեմ-0 Չեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 12/

Լսեցին
ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ /ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ/ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՄԻՆ

/Զեկ. ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետով՝

Հաստատել գույքագրման հանձնաժողովի կողմից ներկայացված համայնքի սեփականություն հանդիսացող գույքի /ակտիվների և պարտավորությունների/ ամենամյա գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն 1-21 հավելվածների:

Կողմ-4 Դեմ-0 Չեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 13/

Լսեցին
ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2010 թվականի հունիսի 1-ի <<Կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգը հաստատելու մասին>> թիվ 186-Ն հրամանի հավելվածի 9-րդ կետի 5-րդ ենթակետով՝

Ծաղկաձոր համայնքի Սարալանջի փողոց թիվ 76/1 հասցեում գտնվող, 0.1 հա մակերեսով հողամասը ճանաչել համայնքային սեփականություն:

Կողմ-4 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 14/

Լսեցին
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝

1. Աճուրդային կարգով օտարել համայնքային սեփականություն համարվող հետևյալ հողամասը՝

Հողամասի հասցեն	Չափը	Նպատակային և գործառնական նշանակությունը	Կադաստրային ծածկագիրը	Մեկնարկային գինը
Քաղաք Ծաղկաձոր, Պահլավունյաց փողոց, թիվ 73	3,059125 հա	Հատուկ պահպանվող, հանգստի	07-005-0016-0199	138394815 ՀՀ դրամ
Քաղաք Ծաղկաձոր, Պահլավունյաց փողոց,թիվ 73/4	0,15 հա	Հատուկ պահպանվող, հանգստի	07-005-0016-0200	6 786 000 ՀՀ դրամ
Քաղաք Ծաղկաձոր, Սարալանջ փողոց, թիվ 56/2	0,1 հա	Հատուկ պահպանվող, հանգստի	07-005-0022-0541	4 524 000 ՀՀ դրամ
Քաղաք Ծաղկաձոր, Ավետիք Իսահակյան փողոց, թիվ 16	0,0898 հա	Հատուկ պահպանվող, հանգստի	07-005-0033-0003	4 062 552 ՀՀ դրամ
Քաղաք Ծաղկաձոր, Խաչիկ Մուրադյան փողոց, թիվ 12/3	0,037 հա	Հատուկ պահպանվող, հանգստի	07-005-0026-0796	1 673 880 ՀՀ դրամ
Քաղաք Ծաղկաձոր, Սարալանջ փողոց, թիվ 66/2	0,09 հա	Հատուկ պահպանվող, հանգստի	07-005-0022-0540	4 071 600 ՀՀ դրամ

Քաղաք Ծաղկաձոր, Մայիսյան փողոց, թիվ 15/2	0,11 հա	Հատուկպահպանվող, հանգստի/բնակավայրերի, այլ	07-005-0008-0299	4 976 400 ՀՀ դրամ
Քաղաք Ծաղկաձոր, Տանձաղբյուր փողոց, թիվ 7/1	1,1754 հա	Հատուկ պահպանվող, հանգստի	07-005-0025-0090	53175096 ՀՀ դրամ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-4 Դեմ-0 Չեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 15/

Ավագանու անդամներ

ԱՐՄԵՆՈՒՀԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՐՄԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Գարիկ Բաղալյանը